

Հետև բերոց գինը կը բարձրացրնեն ,
ու շատ տեսակ ապրանքներուն են ու
մուտքը կը գոցեն : Տնտեսականաց փա-
փաքը հիմա ան չէ որ մէկէն մաքսերը
բոլորովին վերցուին , որովհետև շատ
մարդու և տէրութեանց ալ մնասակար
է աս բանս . բայց կամաց կամաց կրնան
թեթենալ :

Իսկ արգելիչ օրէնքները՝ տնտեսա-
կանաց խօսքին նայելով , նոր ծաղ-
կել սկսած երկիրներու համար օգտա-
կար կը սեպուին , անով որ՝ թէ որ բար-
գաւաճ՝ երկիրներէ առատութեամբ
ընտիր ու աժան ապրանք գայ՝ կրնան
նոյն յետնեալ երկրին գործառուաց աշ-
խատանքն ու ինչքը փանալ , որոնք
հարկաւ մէկէն ծաղկեալ երկիրներուն
պէս ընտիր ու աժան ապրանք չեն կը-
նար հանել : Բայց սոյն արգելիչ օրէնք-
ները նաև Ճարտարութեանց մէջ զար-
գացեալ երկիրներն ալ հաստատելը
ընդունայն վախ մըն է . վասն զի օտար-
ները ոչ երբէք մեր զիւրագնի ու աղէկ
շինած ապրանքէն կը բերեն մեզի , հա-
պա կամ մեր չունեցածը և կամ խիստ
սուղ հանածը կը բերեն . բայց ան ա-
տեն մեր Ճարտարութեանը արգելք
ըլլալին զատ , մեր հարստութիւնը ու
մեր երկրին զիւրութիւնը աւելցուցած
կ'ըլլան . վասն զի չունեցած ապրանք-
նիս ընդհանրապէս ապրանքով կը փո-
խենք թէ որ ծաղկեալ ազգ ենք . իսկ
ներսը սուղ եղած ապրանքը զրսէն ա-
ժան առնելը աս օգուտը ունի որ մենք
փոխանակ մեր ազգային ընչից մէկ մա-
սը այն ապրանքը հաստելու համար
գործածելուն՝ կրնանք ուրիշ Ճարտա-
րութեան մը վրայ պառկեցընել որ ա-
ժան ու աղէկ կը հանենք , և որն որ
ուրիշ երկիրներու մէջ բարձր գին ունի .
և ահայասմէ բոլոր տուրեառիկ Ճար-
տարութեան օգուտն ու գաղտնիքը .
որ ամէն ազգ իրարմով կրնայ հարըստ-
նալ մի և նոյն ժամանակի մէջ :

Հ . Տ . Թ

ՊԱՅՏԱՐԱՐՈՒԵՍ

ԴԼՈՒՆ Դ .

Ձեւրուն ծնուանդը և էտանչը :

ՁԻԵՐՈՒՆ ծնունդը [թէ որ պզտիկ
մատակ ձի է նէ , տասնըմէկ ամիս եղա-
ծին պէս կը ծնանի , [թէ որ ծերանայ՝
մինչև տասուերկու ամսուան կը մօտիկ-
նայ . և [թէ որ աղէկ պահուի , մինչև
երեսուն տարի կեանք ունի , ու քա-
ռասուն տարի ալ ապրողներ կ'ըլլան :

Գորին լման մէկ տարին կը ծնանի .
մինչև քառասուն տարի կ'ապրի , բայց
քսանըհինգ տարուընէ վերջը անօգուտ
է , բանի չի գար :

Հաւանակն ալ լման տարին կը ծնա-
նի , ու մինչև երեսուն տարի կ'ապրի ,
բայց մինչև քսանըհինգ տարուան միայն
բանի կուգայ :

Խոշոր էշերը գէշ կ'ելլեն , դարն 'ի
վեր կը մնան :

Ինհանդարտ էշն ալ չգիրնար , և
ասանկը մալես նէ՝ երկու աչքը կը կուր-
նայ , բանի չիգար :

ԴԼՈՒՆ Ե .

Ալենդանեայ հիւանդութեաններուն վրայ,
ընդհանուր գիտելիք :

Ալենդանւոյն երակը Աւրոպայի
վարպետները վզին երկու կողմի երակ-
ները կը սեպեն . ան երակներուն վրայ
մատերնին կը դնեն , անոր արիւնին
շարժմունքէն և նետելին ինչ հիւան-
դութիւն ունենալը կը հասկընան : Բայց
մեր աս կողմի պայտարները կենդա-
նւոյն ականչն ու քիթը երակ կը սեպեն .
երբոր ականջը պաղ , ու քիթն մէջ ալ
մատերնին խոթեն ու պաղ գտնելու որ
ըլլան՝ հիւանդ ըլլալը կ'իմանան . մինչև

Ա . Ալենդանւոյն երակը Աւրոպայի
վարպետները վզին երկու կողմի երակ-
ները կը սեպեն . ան երակներուն վրայ
մատերնին կը դնեն , անոր արիւնին
շարժմունքէն և նետելին ինչ հիւան-
դութիւն ունենալը կը հասկընան : Բայց
մեր աս կողմի պայտարները կենդա-
նւոյն ականչն ու քիթը երակ կը սեպեն .
երբոր ականջը պաղ , ու քիթն մէջ ալ
մատերնին խոթեն ու պաղ գտնելու որ
ըլլան՝ հիւանդ ըլլալը կ'իմանան . մինչև

մեզի ծանօթութիւն տուող վարպետները ասանկ երակը նայելով՝ ուր է ցաւը, ինչ է, նոր է թէ հին՝ մէկէն կ'իմանային։ Պառ ալ ասանկ նայիս և նշաններուն ալ ուշադրութիւն որ ընեակնաս իմանալ, և գեղը հասցընել, ինչպէս ամէն մէկ ցաւին մէջ ծանուցուածէ։

Բ. Ո՞ի և նոյն ցաւի եղեր է որ մինչեւ տանէն աւելի դեղ առաջարկած ենք. վասն զի ամէն դեղ ամէն ձիու աղեկ չիգար, և ոչ ամէն դեղ ամէն տեղ կրնայ գտնուիլ, մանաւանդ որ հին և նոր ցաւերը այլ և այլ դեղերու կարօտ կ'ըլլան, ուստի գործածողը որն որ գանէ և խեցը կտրէ ան ընէ։

Գ. Հաւերէն ոմանք հասարակ են ամէն կենդանեաց. ոմանք ալ ուրիշուրիշ են. մենք անսնց դեղը ձիու և կովի նայելով ընդհանուր տեղեկութիւն դրեր ենք շատ տեղ։ Պարծածողը կը նայ չափը յարմարցընել յաւանակին, ջորիին և գոմէշին՝ իրենց մեծութեանը և փոքրկութեանը նայելով։

Դ. Պաղ առած կենդանւոյն պէտք է հոգ ընել, և առջի դեղը ան է որ տաք պահուի. տոպրակով յարդը կամ առուոյտը՝ գլխուն անցընել, կամ հաշար կամ յարդ խաչէ, տաք տաք կոնը կի ոսկրին երկու կողմովը, ուսէն ինչուան պոյը տարածէ ու թաղիքը՝ դիր վրան ու պլէ, պաղը ոսկորներէն կը քակէ կը հանէ։ Լամօշակ՝, պղպեղ, աղ իրարու հետ խառնէ, եղեգով քըթէն վեր փէէ, քիչ մըն ալ օշակ աչքին քսէ, քթէն ջուր կը վազէ, պաղը կը քակուի, կենդանին ալ կը բացուի ու շունչ կ'առնէ։

Ե. Կենդանեաց մաքրողականը օձառի՝ ջուրն է, օձառը մանրէ, ջրին մէջ հալեցուր, խմցուր, փորը կը լուծուի։

Զ. Կենդանւոյն ծանր հիւանդութեան ատենը առուոյտը ջրով եփէ. առուոյտը տուր ուտելու, և քամած

ջուրդ ալ խմցուր տաք կամ գաղջ կամ պաղ, հիւանդութեան աստիճանին յարմար. վասն զի առուոյտը կենդանւոյն ամէն կերպ հիւանդութիւններուն աղեկ կուգայ։

Է. Դամբու վրայ կամ ուր որ ըլլայ՝ յանկարծ կենդանւոյդ բան մը պատահեցաւ, և թնչ ըլլալը դեռ հասկըցար կամ չհասկըցար, և նոյն ատեն ուրիշ ձամբայ ալ չես կրնար ընելնէ՝ մէկէն մախաթով քիմքը կամ բերնին առիքը.քիչ մը ծակծրկէ, և թող որ լեզուովը լափլսիկով իր արիւնը ծծէ։ Դպ ընելով կամ ան է որ կ'աղեկնայ, կամ ժամանակ կուտայ որ ետևէ ետևուրիշ դեղ պատրաստես հասցընես։ կամ սիրտ ընես՝ սրածայր փայտ մը առնես և քթին երկու ծակերուն մէջ ալ խոթես, անանկ մը հրես որ արիւն փրթի, և վազէ նէ՝ տակը աման մը բռնէ որ արիւնը հոն վազէ, կենդանին ալ լեզուովը կը խմէ. փորացաւի, գայլցաւի, գարեցաւի համար մէկ հատիկ դեղ է, մէկէն կ'անցնի։

Ը. Հիւանդ կենդանւոյն նատիլը և պառկիլը և դժուարաւ ելել կայնիլը, նաև կտրած կտրած շնչով հեւալը՝ մեռնելու նշան է։

Թ. Ինչ հիւանդութիւններ որ կը պատահին մարդուս՝ կրնայ պատահիլ կենդանեաց ալ, ինչու որ նոյն մարմին են։ Ուստի ինչպէս մարդս ունի հիւանդութիւն և վիրը, ասանկ ալ ունին կենդանիները։ Իւ ինչպէս մարդս հիւանդանանայ նէ՝ բժշկի, վերք ունենայ նէ՝ վիրաբուժի, մէկ տեղը կոտրի կամ խախտի նէ՝ արհեստարուին կարօտ է, ասանկ ալ կենդանիները։ իրենց պատահած ցաւերուն յարմար կը կարօտին բժշկի, վիրաբուժի և այլն. որոնց ամենուն վրայ աս Պայտարարուեստը պիտի խօսի։ Դպ մէնէն առաջ հիւանդութիւններէն սկսելով, միատեսակ ցաւերը մէյմէկ գլուխ կ'ընենք, և ամէն մէկ ցաւը մէյմէկ յօդուածի մէջ բովանդակենք իրենց նշաններովը և պատճառներովը։